ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3

ք. Ալավերդի «06» Օգոստոսի 2024թ.

«_Ալավերդու համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Դ.Ղումաշյան -ի, որը գործում է - համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շին կոմպլեքս գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Երեմյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված _ Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին_–համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ _պայմանագրի կնքման օրից 2 ամիս_:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ..... օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը÷.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[1]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[2]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ*

[2] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:*

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է -1629600 (մեկ միլիոն վեց հարյուր քսանինը հազար վեց հարյուր-) ՀՀ դրամ, որից -271600 (-երկու հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր-) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի -20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[3]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[5].

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք – պայմանագրային գնի 0.05% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.05% չափով
3	Սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.05% չափով

[3] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[4] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[6]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[7]

---

[6] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[8]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է __9__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5. N 5.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1 Ալավերդու համայնքապետարան ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական Վարչություն ՀՎՀՀ 06967886 Հ/Հ 900262121057 Համայնքի ղեկավար՝ Գ.Ղումաշյան _____	«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Վանաձոր, Միչուրինի 18 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050222174541001 ՀՎՀՀ՝ 06961991 Տնօրեն՝ Ա. Երեմյան _____

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 06 » 08 2024թ. կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքների ձեռք բերում» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցում

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Հողային աշխատանքներ	-	-		
1	1-1133	Կառույցի հատվածի բնահողի հարթեցում ձեռքով	100մ²	0.10	30.714	3.07
2	1-961	բնահողի կտրում,մշակում ձեռքով	մ³	3.0	3.371	10.11
3	1-968	բնահողի հետլիցք պատերին և հիմքերին ձեռքով	մ³	0.50	1.410	0.71
4	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	2.50	1.410	3.53
5	1-1183	բնահողի տոփանում,ամրացում	100մ²	0.10	7.856	0.79
		Հիմքեր	-	-		
1	5-67	խճային նախաշերտ 10սմ հաստ.	մ³	0.532	17.790	9.46
2	11-11	բետոնե նախաշերտ 10սմ B 12,5 մակնիշի բետոնով	մ³	0.532	49.927	26.56
3	6-160	Միաձույլ ե/բ ժապավենաձև հիմքերի կառուցում B-15 մակնիշի բետոնով	մ³	1.50	89.737	134.61
4	շուկա	Ամրան Φ16A500C	տն	0.10	383.846	38.38
5	շուկա	Ամրան Φ8A240	տն	0.05	424.319	21.22
6	8-27	հիմքերի թիկունքային մասի քսուկային ջրամեկուսացում բիտումով	100մ²	0.100	70.516	7.05
		Պատեր, ե/բետոնե կոնստրուկցիաներ	-	-		

1	8-29	արտաքին պատերի տակ հիմքերի հորիզոնական ջրամեկուսացում g/ավազային շաղախով	100մ²	0.02	293.298	5.87
2	8-163	պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ³	3.12	35.416	110.50
3	շուկա	Ամրանային ցանց Φ6A240	տն	0.010	424.319	4.24
4	6-170	Միաձույլ ե/բ գոտի-բարավորների կառուցում B 15 բետոնով	մ³	0.53	100.187	53.10
5	շուկա	Ամրան Φ6A240c	տն	0.0150	424.319	6.36
6	շուկա	Ամրան Φ 12 A-500C	տն	0.0500	383.846	19.19
		Միջնորմ				
1	8-140	Միջնորմի շարում թեթև բետոնե բլոկներով n=20սմ	մ³	0.80	34.841	27.87
2	շուկա	միջնորմների մեջ մոնոլիտ բետոնե շաղախի լցում	մ³	0.20	50.762	10.15
3	շուկա	Ամրան Φ8A240	տն	0.01	424.319	4.24
		Հատակ	-	-		
1	5-67	խճային նախաշերտ 10սմ հաստ. հատակների տակ	մ³	0.57	17.790	10.14
2	11-11	ե/բետոնե շերտ 10սմ B 12,5 մակնիշի բետոնով հատակների տակ	մ³	0.57	49.927	28.46
3	շուկա	Ամրան Φ8A240	տն	0.02	424.319	8.49
4	11-55 11-56	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մ²	0.0532	192.558	10.24
5	8-174	ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	մ²	5.32	2.926	15.56
6	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ²	0.0532	137.867	7.33
7	5-115	հատակներ կերամիկական չսահող սալիկներից	մ²	5.32	8.727	46.43
		Բացվածքներ	-	-		
1	շուկա	Մետաղապլաստե խուլ դռների տեղադրում 60մմ հաստ,	մ²	3.78	45.326	171.33
2	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում 4x4մմ ,պրոֆիլի հաստ. 60մմ ,բարդ փականով	մ²	0.72	40.275	29.00

		Տանիք	-	-		
1	10-70	ծածկի փայտանյութի տեղադրում /առանց փայտանյութի արժեքի/	մ³	0.22	57.619	12.68
2	Շուկա	ըհդհանուր փայտանյութի արժեքը	մ³	0.220	182.784	40.21
3	8-14-Բ գ-0,5	Կավարամածի տեղադրում	մ²	8.5	0.263	2.24
4	Շուկա	կավարամածի փայտանյութ	մ³	0.05	182.784	9.14
5	9-24	Տանիքի ծածկույթի իրականացում ց/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-25-0.55	100մ²	0.085	630.443	53.59
6	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	մ³	0.22	8.214	1.81
7	10-203	Կավարամածի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով	100մ² մշակ. մակ.	0.085	26.979	2.29
		հարդարում				
1	34-352	առաստաղի երեսապատում ՊՎՔ նյութով հիմնակմախքով	մ²	5.3	6.692	35.60
2	11 -126	պատերի և միջնորմների սվաղում ց/ա շաղախով	մ²	22.0	2.609	57.40
3	11 -136	ներքին շեպերի սվաղում ց/ա շաղախով մետաղական ցանցով	մ²	2.0	5.833	11.67
4	15-82	պատերի երեսապատում գլազուրային սալիկներով հաստությամբ	100մ²	0.15	1000.076	150.01
5	14-418	պատերի և շեպերի ներկում ջրադիսպերսիոն ներկով ծեփամածկումով	100մ²	0.090	124.418	11.20
6	11-98	արտաքին պատերի ց/ավազային սվաղ	մ²	17.5	2.182	38.18
	15-523	արտաքին պատերի ներկում ճակատային ներկով մածկումով	100մ²	0.175	120.358	21.06
		Ջրամատակարարում				
1	16-261 շուկա	պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում Φ20 փորձարկումով	գծմ	6.0	4.099	24.60
2	16-184	լվացարանի ծորակ Φ15	հատ	2	12.153	24.31
3	շուկա	ճկուն խողովակ Φ15,L-300մմ	հատ	2	0.470	0.94
4	22-366	պոլիպրոպիլենե եռաբաշխիկ Φ20x20x20	հատ	2	2.125	4.25

5	22-365	պոլիպրոպիլենե արմունկ Φ20x20	հատ	4	1.417	5.67
		Կոյուղի				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	1.0	3.371	3.37
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	1.0	1.410	1.41
3	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազով 100մմ	մ³	0.30	5.860	1.76
4	22-119	Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում հողի մեջ Φ110	մ	8.0	1.410	11.28
5	23-155	միացում կոյուղու ցանցին	հատ	1	27.585	27.58
6	16-269 շուկա	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատի վրա Φ 110մմ	գծմ	4.0	3.438	13.75
7	16-265 շուկա	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատի վրա Φ 50	մ	2.0	3.391	6.78
8	17-16 շուկա	ճենապակյա կերամիկական լվացարանի տեղադրում	լրա-կազմ	2	23.903	47.81
9	17-70	ասիական թասերի տեղադրում	լրա-կազմ	2	25.496	50.99
10	22-366	եռաբաշխիչ պոլիվինիլքլորիդե Φ 110 x 110 x 110	հատ	1	2.954	2.95
11	22-366	եռաբաշխիչ պոլիվինիլքլորիդե Φ 110 x 110 x 50	հատ	2	2.693	5.39
12	22-366	եռաբաշխիչ պոլիվինիլքլորիդե Φ 50 x 50 x 50	հատ	2	2.298	4.60
13	22-365	պոլիվինիլքլորիդե արմունկ 110 x 110	հատ	2	1.995	3.99
14	22-365	պոլիվինիլքլորիդե արմունկ 50x50	հատ	2	1.513	3.03
15	շուկա	պողպատե պաշտպանիչ պատյանի տեղադրում խողովակից Φ 200մմ	մ	0.40	22.587	9.03
16	շուկա	բետոն խցափակման համար B 12.5 բետ.	մ³	0.01	44.076	0.44
17	շուկա	Պատյանի և խողովակի միջև առաձգական նյութ	հատ	1	2.350	2.35
		Ընդամենը				***1527.35***
		ԱԱՀ 20%				***305.47***
		Ընդամենը				***1832.82***

* Կապալառուն աշխատանքները կատարում է -Ալավերդի համայնք Մղարթ բնակավայր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Միչուրինի 18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222174541001
ՀՎՀՀ՝ 06961991
Տնօրեն՝ Ա. Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«06» 08 2024թ. կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

« Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքների ձեռք բերում » **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքների ձեռք բերում	Տեխնիկական հսկողության պայմանագրի կնքման օրից	60 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան

/ստորագրություն/
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Միչուրինի 18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222174541001
ՀՎՀՀ՝ 06961991
Տնօրեն՝ Ա. Երեմյան

/ստորագրություն/
L.S

* *Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

Հավելված N 3
«06» 08 2024թ. կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	45211274	Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքներ ի ձեռք բերում	0	0	0	0	0	0	0		1629600	1629600	1629600	1629600	1629600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Գ.Ղումայան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Միչուրինի 18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222174541001
ՀՎՀՀ՝ 06961991
Տնօրեն՝ Ա. Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
06.08.24 թ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

N	ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	Երաշխիքային ժամկետ
1	Ալավերդի համայնքում բակային երկտեղանոց արտաքին զուգարանի կառուցման աշխատանքների ձեռք բերում	3 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Միչուրինի 18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222174541001
ՀՎՀՀ՝ 06961991
Տնօրեն՝ Ա. Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5.1
06.08.2024թ. կնքված
«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3» ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ
հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հավաստում է, որ « **ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/3**» ծածկագրով ԳՀ մրցույթի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղուկասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Միչուրինի 18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222174541001
ՀՎՀՀ՝ 06961991
Տնօրեն՝ Ա. Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ